«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • Fax: +374 10 564111 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 23/563

«14» 05 2019թ.

«Ջի Թի Սի» ՍՊ ընկերության տնօրեն

Պարոն Էդուարդ Փոթոյանին

/ՀՀ, քաղաք Երևան, Արովյան փողոց 23/

Հարգելի պարոն Փոթոյան,

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (այսուհետև՝ Համալսարան) և «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև 2018 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված «Բժշկական նշանակության ապրանքների՝ գործիքների և պարագաների ձեռքբերման» թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-1-ԵՊԲՀ-8» պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) և 2019 թվականի հունվարի 29-ին կնքված թիվ 1 համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) համաձայն, Կազմակեպությունը պարտավոր էր Գնորդի կողմից պահանջ ներկայացնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պահանջում առկա ապրանքը՝ համապատասխան քանակով: Պայմանագրի շրջանակներում «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին 06.02.2019 թվականին ներկայացվել է պահանջ՝ թվով 900 հատ «Գիպսակապ բժշկական 3մx20սմ» ապրանքների մատակարարման մասով, որի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 25.02.2019 թվականը, սակայն մինչև 14.03.2019 թվականը մատակարարվել է թվով 80 հատ «Գիպսակապ բժշկական 3մx20սմ»: Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծված Պատասխանատու ստորաբաժանման կողմից 01.04.2019 թվականին պատշաճ կերպով մատակարարումներ չիրականացվելու մասին ծանուցվել է Կազմակերպությանը և տրվել է 5 օրացույցային օր ժամկետ՝ մատակարարումները մնացորդային մասով իրականցնելու համար:

Համալսարանի ռեկտորի կողմից 2019 թվականի ապրիլի 19-ին գրավոր սահմանվել է նոր ժամկետ՝ մինչև 2019 թվականի ապրիլի 23-ը, որի վերաբերյալ պատշաճ եղանակով

իրականացվել է տեղեկացում Կազմակերպությանը, սակայն նոր սահմանված ժամկետներում նույնպես մատակարարում տեղի չի ունեցել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.7 ենթակետը և 6.2 կետը՝ Համալսարանը 2019 թվականի մայիսի 13-ից՝ միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը կազմում է՝ 1165112 (մեկ միլիոն մեկ հարյուր վաթսունհինգ հազար մեկ հարյուր տասներկու) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ Դուք պարտավոր եք սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Համալսարանի 11500166513800 «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերությունում գործող հաշվեհամարին փոխանցել 34953 (երեսունչորս հազար ինը հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ՝ որպես տույժ (պայմանագրի 6.2 կետի համաձայն): Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Անհատ Ձեռնարկատեր Գրիգոր Բաբայանից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց (տուժանք) 118620 (մեկ հարյուր տասնութ հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամի չափով՝ 11500166513800 հաշվեհամարին:

Հարգանքով՝

Ռեկտոր Արմեն Մուրադյան